

**ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ
Վարդանյան Ա. Ա.**

Ներկա հոդվածում քննության ենթ առել բայական հիմնաբաղադրիչ ունեցող իսկական բարդությունների ձևաբանական կաղապարները՝ հենվելով 5-րդ դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշարի վրա: Արձանագրվել են առավել հաճախադեպ մասնակաղապարները՝ համապատասխան խոսքիմասային արժեքով, տրվել է բաղադրիչների ներշարահյուսական հարաբերության ընդհանրական պատկեր:

Բանալի բառեր. բայահիմք, բարդություն, կաղապար, խոսքի մաս, ածական, գոյական, կապակցելիություն, գործառական բեռնվածություն:

Նախաբան: Լեզվի համակարգում ամենաշարժունը բառապաշարն է, բառաբարդումը՝ լեզվի բառային կազմի հարստացման գլխավոր ուղիներից մեկը: Լեզվաբանական գրականության մեջ բարդությունը սահմանվում է իբրև երկու և ավելի հիմնական ձևերի կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բաղադրություն՝ մեկ ընդհանուր շեշտ ունեցող:

Հայերենի բառակազմության առանձնահատկությունները քննվել են թե՛ լեզվի ամբողջական կառուցվածքը ներկայացնող, թե՛ բուն բառակազմությանը նվիրված ուսումնասիրություններում:

Բառերի տրոհելիության ընկալումը նշմարելի է դեռևս վաղ քերականների գործերում [6, 8], սակայն, ինչպես նկատում է Լ. Հովսեփյանը, «հայ քերականագիտության մեջ ընդունված սխեմայի համաձայն բառակազմության հարցերը քերականական ձեռնարկներում չեն առանձնացվել, այլ քննվել են յուրաքանչյուր խոսքի մասի նկարագրության հետ, ի թիվս դրանց ուղեկցող քերականական այլ հատկանիշների» [5, էջ 5]:

Աշխարհաբարի քերականությունը ներկայացնող հեղինակներից առաջինը, որը, հիմնականում չկրկնելով իր նախորդներին, բառակազմական իրողությունները քննել է իբրև լեզվական համակարգի առանձին ու ինքնուրույն դրսևորումներ, եղել է Մ. Աբեղյանը [1]:

Էդ. Աղայանը Մ. Աբեղյանի տեսության մեջ առավել անընդունելի է համարում այն, որ վերջինս «բարդություն» ընդհանուր անվանումով է կոչել ինչպես հարադրությունները՝ իրենց բոլոր տեսակներով, այնպես էլ բուն բարդությունները, ինչի հետևանքով մասնավորապես մթագնել են բաղադրյալ բառերի կառուցվածքային տարբերությունները: Նա «բարդություն» անվանում է միայն այն բառերը, որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևային միավորում մեկ բառում, և մասնավորաբար իսկական բարդությունների բնորոշման հիմք է համարում նրանցում բաղադրական երկու հիմքի՝ սերող և բաղադրող հիմքերի պարտադիր առկայությունը [2, էջ 271]: Սերող հիմքը բառի այն մասն է, որին ավելանում է արմատ կամ ածանց, բաղադրող հիմքը՝ բառի այն մասը, որ ավելանում է սերող հիմքին: Հիմքերի հաջորդականության մեջ բաղադրող հիմքը միշտ վերջին բաղադրիչն է [4, էջ 15]: Հայերենին հատուկ իսկական բարդություններում բայահիմքը հանդես է գալիս գերազանցապես իբրև բաղադրող հիմք և արտահայտում հիմնական իմաստը [3, էջ 219]:

Կադապարների բազմազանության, ինչպես նաև այդ կադապարների իրացման հնարավորությունների տեսակետից գրաբարը ներկայանում է բավական ճկուն բառակազմական հնարավորություններով: Ներկա հոդվածում անդրադարձել ենք բայահիմք վերջնաբաղադրիչով իսկական բարդությունների և նրանցում սերող հիմքերի կարգային բնութագրին:

Գրաբարի բառակազմական համակարգի ամբողջական նկարագրությունը տալիս է Լ. Հովսեփյանն իր «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ:

Մենք, ունենալով մասնավոր նպատակ, այն է՝ ներկայացնել բայական բաղադրող հիմքով իսկական բարդությունների ձևաբանական կադապարները, մի կողմ ենք թողել հիմք+ածանց հիմնակադապարը: Մի կողմ ենք թողել նաև այն կազմությունները, որոնցում, թեև ունենք հիմքերի գուգորդություններ, սակայն առկա է նաև ածանց(ներ), ասել է թե՛ իսկական բարդության կազմում սերող հիմքի կարգային բնութագիրը տալիս հենվել ենք բացառապես առաջնային հիմքեր ունեցող կադապարների վրա, հիմքեր, որոնք բառակազմական

տեսակետից հնարավոր չէ հատույթավորել: Դրանք են SJS, SS հիմնակադապարները՝ իրենց բոլոր այն ենթակադապարներով, որոնցում ունենք արմատի հնչյունափոխություն կամ քերականական այլ ձևավորում:

Ուսումնասիրությունը հենվում է 5-րդ դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշարի վրա՝ քաղված «Նոր հայկազյան» բառարանից: Բառակազմական տարրերի կարգային և կառուցվածքային գուգորդելիությունը ներկայացնելիս, ըստ անհրաժեշտության, օգտվել ենք բառակազմագիտության մեջ ընդունված պայմանական նշաններից և նշանակումներից. **S-սկզբնահիմք (հիմքի հնչյունափոխված կամ ձևավոր տարբերակ՝ S), a-ածանց, f-քերականական մասնիկ կամ թեքույթ, j-հոդակապ, c-շաղկապ, p-նախդիր, Գ-գոյական, Ա-ածական, Թ-թվական, Դ-դերանուն, Բ-բայ, Մ-մակբայ, Ն-նախդիր, Շ-շաղկապ, Զ-ձայնարկություն:**

Բարդության բաղադրիչների կարգային պատկանելության որոշումը հաճախ դժվարություններ է առաջ բերում՝ պայմանավորված անվանաբայական արմատական համանունությամբ, արմատների առանձին վկայված չլինելով կամ էլ կադապարում այլ արժեք ձեռք բերած լինելով, տարբեր խոսքի մասերի՝ ձևաբանորեն տարբերակված չլինելով, խոսքիմասային փոխանցումներով և այլ իրողություններով: Նման դեպքերում, հետևելով Լ. Հովսեփյանին, առաջնորդվել ենք անմիջական սերող հիմքերի կարգային պատկանելությամբ, սկզբնահիմքերի շարահյուսական գուգորդելիությամբ (տե՛ս Ա+Բ կադապարը) և բառակազմական իմաստով ու բաղադրիչների իմաստաքերականական հարաբերություններով [5, էջ 141]:

Գրաբարում բայը լրացումներ ստանում էր գոյականով, մակբայով, դերբայներով, ածականով, դերանուններով [9, էջ 88]: Բնականաբար, իսկական բարդության կազմում էլ որպես գերադաս (իմա՛ վերջին) բաղադրիչ հանդես եկած բայահիմքը ստանալու է նշված խոսքի մասերով արտահայտված լրացումներ. իսկական բարդությունները ընդհանուր առմամբ հնարավոր է վերածել շարահյուսական կապակցությունների, ընդ որում՝ տվյալ խոսքի մասի կենսունակությունը իբրև բառակապակցության ստորադաս անդամ ուղիղ համեմատական է նրա կենսունակությանը որպես բարդության ստորադաս բաղադրիչ:

Եվ այսպես, բացարձակ գերակշռությունը Գ+Բ մասնակադապարինն է: Առհասարակ, գոյականը և բայը բառակազմական

ակտիվության տեսակետից համապատասխանաբար առաջին և երկրորդ տեղերում են, գոյականը՝ իբրև առաջնաբաղադրիչ, բայը՝ իբրև վերջին բաղադրիչ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հայերենին հատուկ կազմություններում բարդության հիմնական իմաստը երկրորդ բաղադրիչն է արտահայտում:

Հարկ է նշել, որ բարդությունը հիմնականում հողակապավոր է՝ բաղադրիչների ներշարահյուսական բազմազան հարաբերություններով՝ հաճախ խնդրային (*ազգասէր, կարկտաբեր, քարածեծ, խորշակահար*), նաև՝ պարագայական (*անդնդաբնակ, երկնանձրեւ, ճակատագիր, երկրագնաց, գիշերամարտ, կանանցախօս*):

Ձևաբանական այս կաղապարով գերազանցապես ածականներ են կերտվում: Որպես արդյունք՝ ստացվող գոյականները նկատելիորեն սակավ են, ընդ որում՝ սրանք էլ հաճախ Ա/Գ տարարժեքություն ունեն, կամ էլ հետագայում է, որ գոյականացել են. *լեռնակեաց, լուսակալ, լուսանցոյց, սպարակիր, խահամոք, խաչապաշտ, կողածին, խեցագործ, դեկավար*: Ինչպես իրավացիորեն նկատել է Լ. Հովսեփյանը, նման կազմություններն իբրև գերադաս բաղադրիչ ունեն հիմնականում «գործ», «կիր», «կալ», «վար» բայահիմքերը [5, էջ 151]:

Ինչ վերաբերում է Ա+Բ կաղապարին, ապա այս կաղապարը իրացվում է միայն այն դեպքում, երբ առկա է նույնացում մի կողմից՝ ածականի և մակբայի, մյուս կողմից՝ ածականի և գոյականի, ասել է թե՛ ածականի համապատասխանաբար մակբայական և գոյականական կիրառություններ: Լ. Հովսեփյանը նշված դեպքում առաջին բաղադրիչի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջնորդվում է մի սկզբունքով, որին հետևել ենք նաև մենք: Խոսքը վերաբերում է բաղադրիչների շարահյուսական զուգորդելիությանը [5, էջ 141]: Բայի հետ զուգորդելի են հիմնականում գոյականն ու մակբայը, հետևաբար ընդունվում են Գ+Բ և Մ+Բ կաղապարները՝ անկախ այն հանգամանքից, որ սերող հիմքը, առանձին վերցրած, ածական է: Այսինքն՝ գոյականաբար առնված ածականը համագոր է դառնում գոյականին, **մակբայական կիրառությամբը**՝ մակբային: Չանտեսելով այն հանգամանքը, որ բայահիմքին լրացնող ածականը ոչ քիչ դեպքերում կարելի է ընկալել թե՛ գոյականական, թե՛ մակբայական կիրառությամբ, ինչպես՝ *փափկասուն՝ սնեալ ի փափկութեան* կամ *փափուկ, բարերոյս՝ բարիս բուսուցանող* կամ *բարւոք բուսեալ* ևն՝ նշենք, որ ածականի մակբայական կիրառությունն առավել հաճախադեպ է. *ամրագործ, դանդաղամած, բարեխնամ, թիրաշունչ, լռանիստ*: Բերենք օրինակներ

նան բայահիմքին լրացնող ածականի գոյականական կիրառության. *բարեգործ, կանաչագգեաց, ճշմարտատեսաց, չարալից, առաքինասեր*: Առաջին դեպքում բաղադրությունն ամբողջությամբ, կարելի է ասել, բացառապես ածական է. եզակի օրինակներում, ըստ ՆՀԲ-ի տվյալների, ունենք Ա/Գ խոսքիմասային տարաբժեքություն. *ճարտարախօս, խակակուլթ*, երկրորդ դեպքում՝ գերազանցապես ածական (տե՛ս վերը բերված օրինակները), ավելի քիչ՝ Ա/Գ տարաբժեք բառ. *հնազիր, օտարածին*: Նշենք նաև, որ մակբայաբար գործածված ածականը, պայմանավորված բայիմաստով, դրսևորում է պարագայական հարաբերություն, գոյականաբար առնված ածականը՝ խնդրային: Վերջին դեպքում հիմնաբաղադրիչը գլխավորապես ներգործական սեռի ներգործական բայ է:

Մ+Բ կաղապարը նկատելիորեն կենսունակ է: Այս մասնակաղապարում առավել հաճախադեպը «դեռ» (*դեռաբոյս, դեռամուտ*), «հանապազ» (*հանապազագնաց, հանապազատես*), «միշտ» (*մշտադատ, մշտակոխ*), «յար» (*յարաբաց, յարաբուղիս*), «վեր» (*վերընթաց, վերահայեաց*) առաջնաբաղադրիչներն են: Բարդության կազմում բաղադրիչների հարաբերությունը, բնական է, պարագայական է, կառույցը՝ հատկանշային իմաստով:

Ի դեպ, գոյական+բայահիմք և մակբայ կամ մակբայական կիրառությամբ ածական+բայահիմք կաղապարները մեծ ընդգրկունություն ունեն նաև ժամանակակից հայերենում [7, էջ 224]:

Դ+Բ կաղապարը ձևավորում է բաղադրիչների խնդրային հարաբերությամբ ածականներ (բաղադրիչների պարագայական հարաբերության եզակի օրինակ է արձանագրվել, այն է՝ *ուրկայ*): Իբրև առաջնաբաղադրիչ խիստ կենսունակ են «ամեն» (*ամենասեր, ամենատար*), «այլ» (*այլաշարժ, այլափոխ*), «բոլոր» (*բոլորակատար, բոլորաբնակ*), «ինքն» (*ինքնագիտ, ինքնախաղաց*) և «նոյն» (*նոյնագոյ, նոյնահաս*) դերանունները:

Նկատենք, որ այլ դերանուններ այս կաղապարում հանդես են գալիս քերականական՝ ուղղականից տարբեր ձևավորմամբ (կաղապարում՝ S^f). *իմածին, իւրադիր, քոյինատուր, իւրեանցակուռ, միմեանսասեր/միմեանցասեր*:

Բ+Բ կաղապարը գործառական քիչ բեռնվածություն ունի, առավել քիչ են կազմությունները, որոնցում բաղադրիչների հարաբերությունը ստորադասական է: Բերենք մի քանի օրինակ. *աշխատասեր, ճախրահոս, վնասատեսաց, մուրագիտ, թակարդապատիր*: Նշենք, որ այս

մասնակադապարում իբրև հիմքային բաղադրիչ հանդիպում է հիմնականում «սեր» բայահիմքը՝ արտահայտված մաքուր լիաձայն բայարմատով. *դարձասեր, ընթերցասեր* են:

Թ+Բ կադապարը սակավ հանդիպող է, բարդությունը կրկին ածականական արժեք ունի (գոյականացած եզակի օրինակներ են վկայվել, ինչպես՝ *միակեաց-ճգնավոր, երկակտուր-տրամագիծ, բիրաբեր, երկաթնակ, եօթնատես, հարիրաժողով, միածին, քառահողով*: Նշենք, որ բաղադրիչների հարաբերությունն առավելաբար խնդրային է:

Եզրահանգում: Փաստական նյութի ուսումնասիրությամբ հանգեցինք եզրակացության, որ բայական հիմքերը ներկայանում են ձկուն բառակազմական հնարավորություններով: Իսկական բարդության կազմում հանդես գալով որպես գերադաս բաղադրիչ՝ զուգորդվում են տարբեր խոսքի մասերի հետ: Նվազող հաճախականությամբ՝ գործառական մեծ բեռնվածություն ունեն Գ+Բ և Մ+Բ մասնակադապարները: Բայահիմքի և այլ խոսքի մասերի զուգորդումներից առաջին հերթին ածականներ են կերտվում, քանի որ այդպիսիք նախ հատկանշային հարաբերություն են արտահայտում՝ հանդես գալով կա՛մ ենթակայական, կա՛մ հարակատար դերբայի արտահայտած իմաստով: Բացի այն, որ որպես արդյունք ստացվող գոյականները նկատելիորեն սակավ են, վերջիններս էլ հաճախ Ա/Գ տարարժեքություն ունեն: Այսինքն՝ բացարձակ գերակշռությամբ գործ ունենք ածականի խոսքիմասային արժեքով փոխկադապարային կազմությունների հետ, երբ բարդության և նրա հիմնաբաղադրիչի խոսքիմասային արժեքները չեն նույնանում:

МОРФОЛОГИЧЕСКИЕ ЗАКОНОМЕРНОСТИ СЛОЖНОСТЕЙ С ГЛАГОЛЬНОЙ (ВЕРБАЛЬНОЙ) СОСТАВЛЯЮЩЕЙ (КЛАССИЧЕСКИЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК)

Варданян А. А.

Глагольные основы играют важную роль в процессе словообразования. В настоящей статье нами рассмотрены морфологические закономерности сложностей с глагольной (вербальной) составляющей. Исследование основано на лексике произведений литературы пятого века, взятой нами из Нового словаря Айказяна.

Ключевые слова: глагольная основа, сложения, модель, часть речи, прилагательное, существительное, сочетаемость, функциональная нагрузка.

MORPHOLOGICAL PATTERNS OF COMPLEXITIES WITH A VERBAL COMPONENT IN GRABAR

Vardanyan A. A.

In the current article we have examined morphological patterns of real complexities with a verbal main component in Grabar (classical Armenian). The studies, based on the vocabulary, come down to us from our manuscripts. The words were taken from New Haigazian dictionary.

Keywords: verbal stem, complication, pattern, part of speech, adjective, noun, compatibility, functional tension.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Խ. Երկեր: Հատոր Զ: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 2016: 852 էջ:
2. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
3. Առաքելյան Վ. Դ. Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը: Երևան: Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն: 1984: 229 էջ:
4. Խաչատրյան Լ. Ս. Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում: Երևան: «Ջանգալ-97» հրատարակչություն: 2011: 272 էջ:
5. Հովսեփյան Լ. Ս. Գրաբարի բառակազմությունը: Երևան: Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն: 1987: 375 էջ:
6. Ջահուկյան Գ. Բ. Գրաբարի քերականության պատմություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1974: 557 էջ:
7. Ջահուկյան Գ. Բ. Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն: Երևան: Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն: 1989: 319 էջ:
8. Ջահուկյան Գ. Բ. Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1954: 396 էջ:
9. Քոսյան Վ. Ա. Գրաբարի բառակապակցությունները: Երևան: Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն: 1980: 279 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդանյան Ա. Ա. - սասյիրանտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ anneta.anna.vardanyan@mail.ru

Տրվել է խմբագրություն 15.10.2019